# Վերլուծություն

# Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2019 թվականի գործունեության վերաբերյալ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա ենթակայության տակ գտնվող ընկերությունների գործունեության հիմքում դրված են ՀՀ Սահմանադրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում իրականացված նպատակային ծրագրերը ուղղված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ամրագրված Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի լիազորությունների իրականացմանը:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը 2019 թվականին շարունակել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը նպատակաուղղված գործունեությունը: Ոլորտում իրականացված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալած գործունեության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները.

- ապահովել ամենօրյա անաչառ տեղեկատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին,
- լուսաբանել պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները,
- ապահովել բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ, թելադրել հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր,
- կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստել հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը,
- Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնել Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավել և մասնակից դարձնել հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք կապերի վերաիմաստավորմանը, Հայրենիքի զարգացմանը և հայրենադարձությանը,
- ստեղծել Հանրային հեռուստաընկերության առցանց լրատվական կայք և ապահովել ինտերնետային տիրույթում կայքի լայն ճանաչում և բարձր դիտելիություն,
- ապահովել Հանրային ռադիոընկերության առաջին ալիքի հաղորդումների ցուցադրումը (վիզուալիզացիա) համացանցում և համաժամանակյա հեռարձակումը ֆեյսբուքյան էջում,
- ընդլայնել Հանրային ռադիոալիքների սփռման տիրույթը տարածաշրջանում և բարելավել հեռարձակման որակը սահմանամերձ տարածքներում,
- ստեղծել ժամանակակից ստանդարտներին համապատասխան կինո (տեսանյութերի) թվայնացված արխիվ և ապահովել տեսանյութերի հասանելիությունը համացանցային կայքէջում «որոնում» հնարավորության միջոցով,
- ավարտին հասցնել Հանրային հեռուստաընկերության ընհանուր թվայնացման գործընթացը:

Նշված նպատակների ապահովման համար Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը 2019 թվականին իր գործունեության հիմքում դրել էր հետևյալ հիմնական խնդիրները.

- ավելացնել լրատվական հաղորդումների քանակը ընդհանուր եթերաժամանակի մեջ,
- եթերում ապահովել պետական և հանրային կառույցների նախաձեռնությունների, ինչպես նաև հանրության համար առավել հետաքրքրություն ներկայացնող քաղաքական և հասարակական հարցերի շուրջ լայն քննարկումներ, շահագրգիռ կողմերի և փորձագետների մասնակցությամբ,
- նպաստել հանրության մեդիագրագիտության բարձրացմանը, մշակել և հանրությանը ներկայացնել նոր հաղորդաշար՝ ներգրավելով հասարակական և լրագրողական կազմակերպություններին,
- ստեղծել հեռուստատեսային նախագծերի առաջարկների համացանցային հարթակ, որը կապահովի հեռուստատեսային հաղորդումների ձեռքբերման/արտադրության հավասար մրցակցային պայմաններ ֆիլմարտադրող կազմակերպությունների և ստեղծագործ անհատների համար:
- ավելացնել այն հաղորդումների քանակը, որոնք վերաբերում են հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի խնդիրներին՝ նրանց նկատմամբ ձևավորելով հավասար իրավունքների վրա հիմնված վերաբերմունք,
- ավելացնել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմերի քանակը, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացում,
- Հանրային հեռուստաընկերության արբանյակային ալիքի եթերով Սփյուռքի հայ հեռուստադիտողին ներկայացնել տեղեկատվական, ճանաչողական և հոգևոր-մշակութային նպատակային հաղորդումներ,
- ապահովել օտարերկրյա ֆիլմերի և հաղորդումների կրկնօրինակման և թարգմանության բարձր որակ,
- ավարտին հասցնել լրատվական ինտերնետային կայքի լիարժեք շահագործումը՝ որպես առցանց հեռուստատեսային ալիք,
- Հանրային ռադիոընկերության հեռարձակման տիրույթի ընդլայնման և որակի բարելավման համար ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ,
- շարունակել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության շենք-շինությունների հիմնանորոգման և տեխնիկական վերազինման փուլային աշխատանքները
- թվային տեխնոլոգիաների ներդրման և նոր սերնդի սարքավորումների ձեռքբերման միջոցով բարձրացնել հեռուստահաղորդումների հեռարձակման որակը և ապահովել համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- վերակազմավորել «Երևան» ստուդիայի նորակառույց արխիվը, կազմակերպել արխիվային ֆիլմերի և նյութերի միջազգային ստանդարտներին համապատասխան թվային վերականգնման աշխատանքները, ինչպես նաև տարբեր հաղորդաշարերով և եթերային պրեմիերաներով ներկայացնել առավել ուշագրավ հեռուստատեսային վերականգնված արխիվային նյութերը,
- շարունակել Հանրային ռադիոյի Ոսկե ֆոնդի արխիվային նյութերի մշակման, վերականգնման և թվայնացման աշխատանքները՝ միաժամանակ ապահովելով դրանց հասանելիությունը Հանրային ռադիոընկերության կայքէջում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտները:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվում է 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը, որի միջոցառումներն են.

- 11001 «Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ»,
- 11002 «Հեռուստատեսային ծառայություններ»,
- 11003 «Ռադիո ծառայություններ»,
- 11005 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ»,
- 12001 «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն»,
- 12002 ««Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացում»,
- 12003 ««Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացում»,
- 12004 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շրջանառության հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարում».
- 12005 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության ավելացված արժեքի հարկի (ներառյալ՝ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների փոխհատուցում»,
- 12006 «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության շահութահարկի և ավելացված արժեքի հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարում,
- 32001 «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով»:

**<u>11001 «Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ» միջոցառում</u>**

«ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ» միջոցառմամբ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմի պահպանման նպատակով նախատեսվել է հատկացնել 150,429.80 հազ.դրամ, որից ծախսվել է 134,440.02 հազ.դրամ և տնտեսվել է 15,989.78 հազ.դրամ: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է ժամանակավոր թափուր հաստիքների առկայությամբ աշխատավարձի և պարգևատրման ծախսերի, ինչպես նաև կապի ծառայությունների ծեռքբերման գծով խնայողություններով:

Նշված միջոցառման գծով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով արդյունքային ցուցանիշներ սահմանված չեն:

**11002 «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառում**

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով հատկացնել է 5,977,833.00 հազ.դրամ, որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝

| N/N | Արդյունքային ցուցանիշի անվանումը | Տարեկան պլանային ցուցանիշ (ժամ) | Փաստացի ցուցանիշ (ժամ) | Աճ/նվազ ում (+/-), (ժամ) | Տարբերության պատճառ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի եթերում | 8,760.0 | 8,748.1 | 11.9 | Շեղումը պայմանավորված է պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացմամբ |
| 2 | «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային հեռուստաընկերության Միջազգային ալիքի եթերում | 8,760.0 | 8,748.1 | 11.9 | |

**11003 «Ռադիո ծառայություններ» միջոցառում**

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» միջոցառմամբ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ–ին «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով հատկացվել է 942,364.90 հազ.դրամ, որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝

| N/N | Արդյունքային ցուցանիշի անվանումը | Տարեկան պլանային ցուցանիշ (ժամ) | Փաստացի ցուցանիշ (ժամ) | Աճ/նվազում (+/-), (ժամ) | Տարբերության պատճառ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագրի» եթերում, ժամ | 8,760.0 | 8,760.0 | - | |
| 2 | Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագրի» եթերում հաղորդումների պատրաստում և հեռարձակում, ժամ | 8,760.0 | 8,760.0 | - | |
| 3 | Հանրային ռադիոընկերության կողմից «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքի եթերում ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում, ժամ | 8,760.0 | 8,760.0 | - | |
| 4 | ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հաղորդումների հեռարձակում, ժամ | 1,186.25 | 829.25 | 357.0 | Շեղումը պայմանավորված է կարճ ալիքներով 2 լեզուներով (պարսկերեն և արաբերեն) եթերի հեռարձակման դադարեցմամբ: |

**11005 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» միջոցառում**

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հոգևոր-մշակութային հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» միջոցառմամբ ընկերությանը «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով հատկացվել է 233,484.40 հազ.դրամ, որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝

| N/N | Արդյունքային ցուցանիշի անվանումը | Տարեկան պլանային ցուցանիշ (ժամ) | Փաստացի ցուցանիշ (ժամ) | Աճ/նվազում (+/-), (ժամ) | Տարբերության պատճառ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում, ժամ | 5,690.0 | 5,660.0 | 30 | Շեղումը պայմանավորված է հոգևոր հաղորդումների փոխարեն այլ հաղորդումների հեռարձակմամբ: |
| 2 | Այլ հաղորդումների պատրաստում և հեռարձակում, ժամ | 880.0 | 910.0 | -30 | |

**12001 «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն» միջոցառում**

Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը հանդիսանում են Հեռարձակողների եվրոպական միության լիիրավ անդամ, որի համար վճարվում է անդամակցության տարեկան վճար: Անդամակցության վճարի գումարը ֆիքսված չէ, այն վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները, և 2019թ-ի համար կազմել է 43,225.26 հազ.դրամ: «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն» միջոցառմամբ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 46,180.70 հազ.դրամ, որից 43,225.26 հազ.դրամը՝ 2019թ.-ի համար, իսկ 2,955.44 հազ.դրամը՝ 2018թ.-ի տարեվերջի դրությամբ առկա կրեդիտորական պարտքը մարելու համար:

Նշված միջոցառման գծով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝

| N/N | Արդյունքային ցուցանիշի անվանումը | Տարեկան պլանային ցուցանիշ | Փաստացի ցուցանիշ | Աճ/նվազում (+/-) | Տարբերության պատճառ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Միջազգային կազմակերպությունների քանակ | 1 | 1 | - | |

**12002 ««Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացում» միջոցառում**

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 320-Ն որոշման՝ «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության աշխատողների աշխատավարձերի վճարման, այլ ընթացիկ ծախսերի իրականացման, ինչպես նաև լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացման նպատակով «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությանը որպես նվիրաբերություն տրամադրելու համար Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին 2019 թվականին հատկացվել է 37,500.00 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով), որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով արդյունքային ցուցանիշներ սահմանված չեն:

**12003 ««Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացում» միջոցառում**

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 320-Ն որոշման՝ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության աշխատողների աշխատավարձերի վճարման, այլ ընթացիկ ծախսերի իրականացման, ինչպես նաև լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը որպես նվիրաբերություն տրամադրելու համար Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին 2019 թվականին հատկացվել 14,850.00 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով), որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով արդյունքային ցուցանիշներ սահմանված չեն:

**12004 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շրջանառության հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարում» միջոցառում**

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1313-Ն որոշման՝ «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շրջանառության հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունը վճարելու նպատակով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին 2019 թվականին հատկացվել է 17,922.79 հազար դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով), որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով արդյունքային ցուցանիշներ սահմանված չեն:

**12005 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության ավելացված արժեքի հարկի (ներառյալ՝ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների փոխհատուցում»**

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1421-Ն որոշման՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու համար վերջինիս մոտ առաջացած ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունը վճարելու նպատակով Հանրային

հեռուստառադիոընկերության խորհրդին Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2019 թվականին հատկացվել է 1,277,254.00 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով), որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով արդյունքային ցուցանիշներ սահմանված չեն:

**12006 «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության շահութահարկի և ավելացված արժեքի հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարում» միջոցառում**

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1889 որոշման՝ «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու համար վերջինիս մոտ առաջացած շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունը վճարելու նպատակով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2019 թվականին հատկացվել է 105,677.30 հազ. դրամ՝ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով), որն ամբողջությամբ իրականացվել է:

Նշված միջոցառման գծով արդյունքային ցուցանիշներ սահմանված չեն:

**32001 «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառում**

«ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառմամբ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել էր հատկացնել 75,467.30 հազ.դրամ, որի գծով փաստացի ծախսվել է 62,889.42 հազ. դրամ և 12,577.88 հազ.դրամի գումար հետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ տեխնիկական վերազինման միջոցառմանը տրամադրվող գումարը ենթակա չէ ավելացված արժեքով հարկման, այնինչ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվող բոլոր միջոցառումների հետ մեկտեղ այս միջոցառման համար նույնպես հաշվարկվել և 2019թ-ի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է ԱԱՀ-ի գումար: Այսպիսով այս գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Նշված միջոցառման գծով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են հետևյալ արդյունքային ցուցանիշները՝

| N/N | Արդյունքային ցուցանիշի անվանումը | Տարեկան պլանային ցուցանիշ | Փաստացի ցուցանիշ | Աճ/նվազում (+/-), | Տարբերության պատճառ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արտադրական տեխնիկայի քանակ, հատ | 350.0 | 118.0 | 232.0 | Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ փաստացի ձեռք բերված թվով 118 հիմնական միջոցները ձեռք են բերվել և հաշվառվել են Ընկերության հաշվեկշռում որպես լրակազմ, ինչի արդյունքում քանակային հաշվառմամբ առկա է նվազում: |
| 2 | Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի | 5.0 | 5.0 | - | |
| 3 | Տվյալ բյուջետային տարվան նախորդող երեք տարիների ընթացքում սարքավորումների ձեռքբերման վրա կատարված գումարային ծախս, հազար դրամ | 392,600.0 | 425,480.2 | -32,880.0 | Ընդհանուր առմամբ տեխնիկական վերազինման գծով 2016-2018թթ. օգտագործվել է 425,480.2 հազ.դրամ, իսկ ՀՀ կառ. 14.09.18 թ N 987-Ն որոշմամբ 2018թ-ին իրականացված 32,880.00 հազ.դրամի վերաբաշխումը 2019թ-ի բյուջեում չի արտացոլվել: |

# ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի մասին տեղեկանք

| Հ/Հ | Անվանումը | Գումարն ըստ որոշման /հազ.դրամ/ |
|---|---|---|
| *Պատասխանատու և կատարող մարմին՝ 105033- Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ* | | *1,453,204.09* |
| 1 | **ՀՀ կառավարության որոշում 29.03.2019թ. N320-Ն** | 52,350.00 |
| | **Ծրագիր՝** 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» | 52,350.00 |
| 1.1 | **Միջոցառում՝** 12002 ««Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացում» | 37,500.00 |
| | **Տնտեսագիտական դասակարգման հոդված** 4637 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» | 37,500.00 |
| 1.2 | **Միջոցառում՝** 12003 ««Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի կազմակերպման հետ կապված անհրաժեշտ ծախսերի իրականացում» | 14,850.00 |
| | **Տնտեսագիտական դասակարգման հոդված՝** 4637 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» | 14,850.00 |
| 2 | **ՀՀ կառավարության որոշում 26.09.2019թ. N1313-Ն** | 17,922.79 |
| | **Ծրագիր՝** 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» | 17,922.79 |
| 2.1 | **Միջոցառում՝** 12004 ««Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շրջանառության հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարում» | 17,922.79 |
| | **Տնտեսագիտական դասակարգման հոդված՝** 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» | 17,922.79 |
| 3 | **ՀՀ կառավարության որոշում 10.10.2019թ. 1421-Ն** | 1,277,254.00 |
| | **Ծրագիր՝** 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» | 1,277,254.00 |
| 3.1 | **Միջոցառում՝** 12005 ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության ավելացված արժեքի հարկի (ներառյալ՝ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների փոխհատուցում» | 1,277,254.00 |
| | **Տնտեսագիտական դասակարգման հոդված՝** 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» | 1,277,254.00 |
| 4 | **ՀՀ կառավարության որոշում 19.12.2019թ. N1889-Ն** | 105,677.30 |
| | **Ծրագիր՝** 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» | 105,677.30 |
| 4.1 | **Միջոցառում՝** 12006 ««Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության շահութահարկի և ավելացված արժեքի հարկի (ներառյալ տույժերի և տուգանքների) գծով առաջացած հարկային պարտավորությունների վճարում» | 105,677.30 |
| | **Տնտեսագիտական դասակարգման հոդված**՝ 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» | 105,677.30 |

Օրինակելի ձև Հ-2

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
**01.01.2019թ. --31.12.2019թ. ժամանակահատվածի համար**

| | | |
|---|---|---|
| 1. Ծրագրի պատասխանատու մարմնի | Անվանումը՝ | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| | Դասիչը՝ | 1042 |
| 2. Միջոցառումը կատարող մարմնի | Անվանումը՝ | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| | Դասիչը՝ | 1042 |
| 3. Հիմնարկի անվանումը՝ | | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| 4. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը՝ | | 010061 |
| 5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ | | 105033 |
| 6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | Բաժին N | 08 |
| | Խումբ N | 03 |
| | Դաս N | 01 |
| 7. Ծրագրային դասակարգման | Ծրագրի անվանումը | Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում |
| | Ծրագրի դասիչը | 1042 |
| | Միջոցառման անվանումը | Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ |
| | Միջոցառման դասիչը | 11001 |
| 8. Ֆինանսական ցուցանիշների չափման միավորը՝ | | հազար դրամ |

| Տողի N | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր) | | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որոնցից՝30 օրից անց պարտքեր | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | **Ընթացիկ ծախսեր** | x | **150,429.80** | - | - | (0.00) | **150,429.80** | **134,440.02** | **134,440.02** | **131,979.93** | | - | - |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 1100000 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,** | x | **150,429.80** | - | - | (0.00) | **150,429.80** | **134,440.02** | **134,440.02** | **131,979.93** | | - | - |
| 1110000 | **1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,** այդ թվում՝ | x | 108,346.50 | - | - | - | 139,302.60 | 125,332.42 | 125,332.42 | 124,218.68 | | - | - |
| 1110000 | **1.1 Աշխատանքի վարձատրություն** | x | 139,302.60 | - | - | - | 139,302.60 | 125,332.42 | 125,332.42 | 124,218.68 | | - | - |
| 1111000 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | **4111** | 108,346.50 | | - | - | 108,346.50 | 104,967.83 | 104,967.83 | 103,854.09 | | | - |
| 1112000 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | **4112** | 30,956.10 | | | - | 30,956.10 | 20,364.59 | 20,364.59 | 20,364.59 | | | - |
| 1120000 | **2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում** | x | 10,985.80 | - | - | (0.00) | 11,091.20 | 9,085.17 | 9,085.17 | 7,738.82 | | - | - |
| 1121000 | ***2.1 Շարունակական ծախսեր*** | x | 2,929.50 | - | - | - | 2,929.50 | 1,265.52 | 1,265.52 | 1,261.38 | | - | - |
| 1121400 | -Կապի ծառայություններ | **4214** | 2,809.50 | | | - | 2,809.50 | 1,157.52 | 1,157.52 | 1,153.38 | | | - |

| Տողի N | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր) | | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որոնցից՝30 օրից անց պարտքեր | |
| 1121500 | -Ապահովագրական ծախսեր | **4215** | 120.00 | | - | - | 120.00 | 108.00 | 108.00 | 108.00 | | | - |
| 1121600 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | **4216** | | | | - | - | | | | | | |
| 1122000 | ***2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր*** | x | 2,403.20 | - | - | (260.00) | 2,143.20 | 2,106.95 | 2,106.95 | 2,106.95 | | - | - |
| 1122100 | -Ներքին գործուղումներ | **4221** | 700.00 | | | (282.75) | 417.25 | 381.00 | 381.00 | 381.00 | | | - |
| 1122200 | -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | **4222** | 1,703.20 | | | 22.75 | 1,725.95 | 1,725.95 | 1,725.95 | 1,725.95 | | | - |
| 1123000 | **2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում** | x | 1,400.00 | - | - | (73.17) | 1,595.83 | 1,392.64 | 1,392.64 | 1,392.64 | | - | - |
| 1123200 | -Համակարգչային ծառայություններ | **4232** | 150.00 | | | 222.00 | 372.00 | 370.00 | 370.00 | 370.00 | | | - |
| 1123400 | -Տեղեկատվական ծառայություններ | **4234** | 950.00 | | | 47.00 | 997.00 | 796.40 | 796.40 | 796.40 | | | - |
| 1123700 | -Ներկայացուցչական ծախսեր | **4237** | 300.00 | | | (73.17) | 226.83 | 226.24 | 226.24 | 226.24 | | | - |
| 1125000 | ***2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)*** | x | 800.00 | - | - | - | 800.00 | 800.00 | 800.00 | 800.00 | | - | - |
| 1125200 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | **4252** | 800.00 | | | - | 800.00 | 800.00 | 800.00 | 800.00 | | | - |
| 1126000 | ***2.6 Նյութեր*** | x | 3,558.50 | - | - | 64.17 | 3,622.67 | 3,520.06 | 3,520.06 | 2,177.85 | | - | - |
| 1126100 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | **4261** | 689.10 | | - | 64.17 | 753.27 | 708.76 | 708.76 | 615.12 | | | |
| 1126400 | -Տրանսպորտային նյութեր | **4264** | 2,764.00 | | - | - | 2,764.00 | 2,705.90 | 2,705.90 | 1,443.68 | | | |
| 1126700 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | **4267** | 105.40 | | | | 105.40 | 105.40 | 105.40 | 119.05 | | | |
| 1170000 | ***7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | 36.00 | - | - | - | 36.00 | 22.43 | 22.43 | 22.43 | | - | - |
| 1172000 | *7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ* | x | 36.00 | - | | | 36.00 | 22.43 | 22.43 | 22.43 | | | |
| 1172300 | -Պարտադիր վճարներ | **4823** | | | | - | - | 22.43 | 22.43 | 22.43 | | | - |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | x | 150,429.80 | - | - | (0.00) | 150,429.80 | 134,440.02 | 134,440.02 | 131,979.93 | | - | - |

Օրինակելի ձև Հ-4

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԻՄՆԱՐԿԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ, ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**01.01.2019թ. --31.12.2019թ. ժամանակահատվածի համար**

| | | |
|---|---|---|
| 1. Ծրագրի պատասխանատու մարմնի | Անվանումը՝ | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| | Դասիչը՝ | 1042 |
| 2. Միջոցառումը կատարող մարմնի | Անվանումը՝ | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| | Դասիչը՝ | 1042 |
| 3. Հիմնարկի անվանումը՝ | | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| 4. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը՝ | | 010061 |
| 5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ | | 105033 |
| 6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | Բաժին N | 08 |
| | Խումբ N | 03 |
| | Դաս N | 01 |
| 7. Ծրագրային դասակարգման | Ծրագրի անվանումը | Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում |
| | Ծրագրի դասիչը | 1042 |
| | Միջոցառման անվանումը | Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ |
| | Միջոցառման դասիչը | 11001 |
| 8. Ֆինանսական ցուցանիշների չափման միավորը՝ | | հազար դրամ |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Դեբիտորական պարտքեր | | | | Կրեդիտորական պարտքեր | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տարեսկիզբ | | տարեվերջ | | տարեսկիզբ | | տարեվերջ | |
| | անվանումները | NN | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից |
| Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1100000 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, | x | 6,717.50 | 6,717.50 | 9,120.57 | 9,120.57 | 121.48 | 121.48 | 64.46 | 64.46 |
| **1110000** | **1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝** | **x** | 4,994.06 | 4,994.06 | 6,054.92 | 6,054.92 | 52.88 | 52.88 | - | - |
| **1110000** | **1.1 Աշխատանքի վարձատրություն** | **x** | 4,994.06 | 4,994.06 | 6,054.92 | 6,054.92 | 52.88 | 52.88 | - | - |
| 1111000 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 4,994.06 | 4,994.06 | 6,054.92 | 6,054.92 | 52.88 | 52.88 | | - |
| 1112000 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 411200 | | | | | | | | - |
| 1117000 | -Սոցիալական ապահովության վճարներ | 4131 | | - | - | - | | - | - | - |
| **1120000** | **2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում** | **x** | 1,723.44 | 1,723.44 | 3,065.65 | 3,065.65 | 68.60 | 68.60 | 64.46 | 64.46 |
| **1121000** | ***2.1 Շարունակական ծախսեր*** | | - | - | - | - | 68.60 | 68.60 | 64.46 | 64.46 |
| 1121400 | -Կապի ծառայություններ | 4214 | - | - | - | - | 68.60 | 68.60 | 64.46 | 64.46 |
| 1121500 | -Ապահովագրական ծախսեր | 4215 | - | - | - | - | | | - | - |
| 1121600 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | - | - | - | - | | | | - |
| **1122000** | ***2.2 Գործուղումների և շրջագայություններ ծախսեր*** | **x** | - | - | - | - | - | - | - | - |
| 1122100 | -Ներքին գործուղումներ | 4221 | | | | | | | - | - |
| 1122200 | -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | - | - | - | - | - | - | - | - |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Դեբիտորական պարտքեր | | | | Կրեդիտորական պարտքեր | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | տարեսկիզբ | | տարեվերջ | | տարեսկիզբ | | տարեվերջ | |
| | | | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից |
| **1123000** | ***2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում*** | **x** | - | - | - | - | - | - | - | - |
| 1123200 | -Համակարգչային ծառայություններ | 4232 | - | - | - | - | - | - | | |
| | -Համակարգչային ծառայություններին ուղղված պահեստավորված միջոցներ | 4232* | - | - | - | - | - | - | - | - |
| 1123400 | -Տեղեկատվական ծառայություններին ուղղված պահեստավորված միջոցներ | 4234 | | | | | | | | |
| | -Տեղեկատվական ծառայություններ | 4234* | | | | | | | | - |
| 1123700 | -Ներկայացուցչական ծախսեր | 4237 | - | - | - | - | - | - | - | - |
| | -Ներկայացուցչական ծախսերին ուղղված պահեստավորված միջոցներ | 4237* | - | - | - | - | - | - | | - |
| **1125000** | ***2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և*** | **x** | - | - | - | - | - | - | - | - |
| 1125200 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | - | - | - | - | - | - | - | - |
| **1126000** | ***2.6 Նյութեր*** | **x** | 1,723.44 | 1,723.44 | 3,065.65 | 3,065.65 | - | - | - | - |
| 1126100 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | - | - | - | - | | - | - | - |
| | -Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ | 4261* | 252.49 | 252.49 | 346.13 | 346.13 | - | - | - | - |
| 1126400 | -Տրանսպորտային նյութեր | 4264 | | | | | - | - | | - |
| | -Պահեստավորված տրանսպորտային նյութեր | 4264* | 1,426.30 | 1,426.30 | 2,688.52 | 2,688.52 | - | - | - | - |
| 1126700 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | | | | | | | | - |
| | -Պահեստավորված կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267* | 44.65 | 44.65 | 31.00 | 31.00 | | | | |
| **1170000** | ***7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | **x** | - | - | - | - | - | - | - | - |
| **1172000** | ***7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ*** | **x** | - | - | - | - | - | - | - | - |
| 1172300 | -Պարտադիր վճարներ | 4823 | | - | - | - | | - | - | - |
| 1000000 | Ընդամենը ծախսեր (տող1200000+ տող1100000) | x | 6,717.50 | 6,717.50 | 9,120.57 | 9,120.57 | 121.48 | 121.48 | 64.46 | 64.46 |
| | այդ թվում | | | | | | | | | |
| | Ընդամենը դեբիտորական, կրեդիտորական պարտքեր | | 4,994.06 | 4,994.06 | 6,054.92 | 6,054.92 | 121.48 | 121.48 | 64.46 | 64.46 |
| | Ընդամենը պահեստավորված միջոցներ | | 1,723.44 | 1,723.44 | 3,065.65 | 3,065.65 | - | - | - | - |

**Օրինակելի ձև Հ-7**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
01.01.2019թ. 31.12.2019թ. ժամանակահատվածի համար

| | | |
|---|---|---|
| 1. Ծրագրի պատասխանատու մարմնի | Անվանումը՝ | Հանրային |
| | Դասիչը՝ | 1042 |
| 2. Միջոցառումը կատարող մարմնի | Անվանումը՝ | Հանրային |
| | Դասիչը՝ | 11001 |
| 3. Հիմնարկի անվանումը՝ | | Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ |
| 4. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը՝ | | 010061 |
| 5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ | | 105033 |
| 6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | Բաժին N | 08 |
| | Խումբ N | 03 |
| | Դաս N | 01 |
| 7. Ծրագրային դասակարգման | Ծրագրի անվանումը | Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում |
| | Ծրագրի դասիչը | 1042 |
| | Միջոցառման անվանումը | Հանրային հեռուստառադիոընկերության |
| | Միջոցառման դասիչը | 11001 |
